

# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

— 0 —

## ՄԻ ՀԱՄԱԿՐԵԼԻ ՁԵՌՆԱՐԿ

«Հորիզոնի» № 131-ում կարդացի մի կոչ ուղղած հայ հասարակութեան և գլխաւորապէս ցիր ու ցան տարօնցիներին:

Մշոյ մասնաժողովը այդ կոչով հրաւեր է կարգում, որ ամեն հայ մարդ, մասնաւորապէս տարօնցի տարագիրը բարոյապէս և նիւթապէս իրեն օժտնդակէ, որով մասնաժողովը հնարաւորութիւն կունենայ իր նպատակը իրագործել—համազգային տօնը յաւերժացնել մէկ մամուլ գնելով:

Մամուլի հաստատման կարիքը ըզզացում էր շատ առաջ, սակայն քաղաքական—տնտեսական աննպաստ հանգամանքների պատճառով այդ գաղափարը թէև ոչ դժւար իրագործելի, բայց այնուամենայնիւ մնացել էր մի իդէալ տարօնցիների համար, և ահա նոր է սկսել նրա իրագործման նախաձեռնութիւնը,—մի գործ, որ անպայման արժանի է համակրանքի ու առանձին ուշադրութեան:

Մամուլը այն մեծ խթաններից մէկըն է, որ տարածում է լուսաւորութիւնը խաւարի մէջ խարխափող ժողովուրդների մէջ, հարւածում ու ջախջախում է հասարակական չարիքները և մարդկանց միտքը ուղղում է դէպի բարին ու գեղեցիկը, դէպի հասարակական ու ընկերական շահերը: Մամուլը Տարօնի բազմաշարժար ժողովրդի համար մի նոր արշալոյս է, որին բազկատարած ողջունելու համար ամեն մի տարօնցու վսեմ պարտականութիւնը պէտք է լինի:

Կենդրոնը, որին այդ ժողովուրդը մինչև այժմ աչքերը յառած սպասել է պատգամների, եղել է շատ անարդիւնաւէտ. կեդրոնի քաղաքական կաշկանդումների ու հեռաւորութեան պատճառով տարօնցին ամիսներից յետոյ միայն բաղդ է ունեցել կարդալ իր վէրքի ու ցաւի մասին: Մամուլը պէտք է լինի ժողովրդի մօտ, նրա

ցաւերին ու նրա կեանքի պատմութեանը տեղեակ. այդպիսի պայմաններում միայն մամուլի դերը լինում է դրական և արդիւնաւէտ: Մենք պարտաւոր ենք այդ գիտակցել, և բոլոր տարօնցիներիս սեպուհ պարտականութիւնը պէտք է լինի չխնայել մեր կոպէկները այդ վերին աստիճանի օգտաւէտ գործի համար, որով կը նպաստենք մեր սերունդների լուսաւորութեան ու նրանց կուլտուրական շաւղի մէջ մտնելու գործին:

Ամերիկայում ապրող տարօնցիները ձայնակցել են այդ հրաւերին և մեծ եռանդով գործում են մի յատուկ մարմնի նախաձեռնութեամբ: Մինչդեռ Կովկասի տարօնցիները գտնւում են վերին աստիճանի դատապարտելի անտարբերութեան մէջ: Ճիշտ է, Ամերիկայի տարօնցիները անհամեմատ նիւթականապէս աւելի լաւ պայմաններում են գտնւում Կովկ. տարօնցիներից, բայց որ վերջիներս էլ իրենց կարողութեան համեմատ անշուշտ կարող են օգնել և ցոյց տալ իրենց գործունէութիւնը և ընդհանրապէս գործ տեսնելու ընդունակութիւնը, այդ ևս անվիճելի իրողութիւն է:

Աննպատակայարմար չի լինի, իմ կարծիքով որ Կովկ. տարօնցիները նոյնպէս ունենան մի մարմին, որը հնարաւորութիւն ունենայ բանակցել ուրիշ քաղաքներում ապրող իրենց հայրենակիցների հետ, և միևնոյն ժամանակ յարաբերութեան կապը կենդրոնի—Մշոյ հետ աւելի կենդանի պահել:

Փամանակն է, որ տարօնցին ևս ցոյց տայ, որ իր սուղ ու անձուկ վիճակով հանդերձ կարող է սեփական միջոցներով նպաստել մի այդպիսի խիստ օգտաւէտ գործի յաջողմանը, դրանով արտայայտելով իր սէրն ու համակրանքը դէպի հայրենի աւերակ երկիրը:

Արմենակ Սասունի

Թիֆլիզ, 18 յունիսի